

Արձանագրություն № 7 (314)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019 թ-ի մարտի 15-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 24-ը:
Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

1. ԵՊՀ-ի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկման, խնդիրների վերհանման և առաջարկություններ ներկայացնելու հարցը:
2. Մոսկվայի կառավարության երկու կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ-ի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկման, խնդիրների վերհանման և առաջարկություններ ներկայացնելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան՝ մ.գ.թ., դոցենտ Պ.Բալայանը, ռուս գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Լ.Հակոբյանը, ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Լ.Բրուսյանը, ռուսաց լեզվի ամբիոնի /հում. Ֆակ-ի/ վարիչ, բ.գ.թ., դոցենտ Ս.Լալայանը, ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Լ.Մաթևոսյանը, ֆակուլտետի արհկոմիտեի նախագահ, ռուսաց լեզվի ամբիոնի /հում. Ֆակ-ի/ դասախոս Է.Սադոյանը, ռուսաց լեզվի ամբիոնի /բնագ. Ֆակ-ի/ վարիչ, բ.գ.թ., դոցենտ Բ.Խոջումյանը, գրականության տեսության և քննադատության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Մ.Ջանփոլադյանը, ռուսաց լեզվի ամբիոնի /հում. Ֆակ-ի/ ասիստենտ Մ.Դպիրյանը, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Վ.Օհանյանը, ՈՒԳԸ նախագահ Կ.Անուսյանը, 4-րդ կուրսի ուսանող Մ.Մկրտչյանը:

Ելույթներում հնչեցին տարբեր կարծիքներ, արվեցին մի շարք առաջարկներ: Քննարկման արդյունքում գիտական խորհուրդը ընդունեց հետևյալ որոշումը:

Վերջին շրջանում ԵՊՀ-ի շուրջ անառողջ մթնոլորտ է ստեղծվել: Հնչում են տարբեր հայտարարություններ, որոնց կողմնակալությունը չի կարող չանհանգստացնել և չմտահոգել մեզ՝ ԵՊՀ-ի աշխատակիցներին և ուսանողներին: Հարկ ենք համարում ընդգծել, որ ԵՊՀ-ն այսօր հանդիսանում է հանրապետության լավագույն բուհը, իսկ

միջազգային վարկանիշերում զբաղեցնում բավականին լավ տեղ՝ մտնելով աշխարհի բուհերի առաջին 10 տոկոսի մեջ:

Այսօր Երևանի պետական համալսարանը հանրապետության խոշորագույն կրթական և գիտական կենտրոնն է, որն իր հանդեպ բարյացակամ և շահագրգիռ վերաբերմունքի կարիք ունի, հատկապես ԵՊՀ-ի 100-ամյա հոբելյանի նախօրեին:

Անշուշտ, ԵՊՀ-ում գոյություն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի խնդիրներ: Զարգանալու, առաջ գնալու համար դրանք պետք է լուծվեն:

Ելնելով վերը նշվածից՝ **առաջարկում ենք.**

1. Դիմել ՀՀ Կառավարությանը խնդրանքով պակասեցնել ԵՊՀ-ի հարկային բեռը, քանի դեռ Կառավարությունը չի կարող ավելացնել բյուջետային հատկացումները:
2. Բարձրացնել ուսանողությանը տրվող կրթաթոշակը:
3. Համալսարանական կրթության հիմնարար սկզբունքներից է դասախոսի և ուսանողի միջև ստեղծագործական կապը, որն, ըստ էության, խզված է, և այսօր սահմանափակվում է կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի դեկավարմամբ: Սակայն դեկավարմանը հատկացվող ժամաքանակը այնքան քիչ է /5, 20 և 50 ժամ/, որ այդ ամենը կրում է ձևական բնույթ: Ուստի առաջարկում ենք ավելացնել կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի դեկավարմանը հատկացվող ժամաքանակը:
4. Արմատականորեն փոխել սոցիալաբանության ուղղվածությունը: Գլխավորը պետք է դառնա գիտելիք ստանալու գործընթացում ուսանողների կարիքների վերհանումը, ոչ թե դասախոսին տրվող անանուն գնահատականը, որը հաճախ ոչ օբյեկտիվ է և կողմնակալ: Հարցումները, ի դեպ, կարելի է անցկացնել տարին մեկ անգամ:
5. Քանի դեռ մասնագիտական առարկաների ուսուցումը հիմնված կլինի միայն Հայաստանում տպագրված դասագրքերի վրա, ուսանողների կրթական մակարդակը կմնա ցածր: Հարկավոր է պարտադիր պայման դնել՝ օտարալեզու գիտական գրականության օգտագործումը:
6. Բարելավել գրադարանի աշխատանքը: Գրքի՝ գրադարանում հայտնվելու պահից մինչև նրա շրջանառության մեջ մտնելը անցնում է մոտ 6 ամիս: Դա չափազանց շատ է: Անհրաժեշտ է առաջին հերթին թվայնացնել առավելագույն պահանջարկ ունեցող դասագրքերը և ուսումնական ձեռնարկները և ստեղծել էլեկտրոնային գրադարան: Նաև պետք է հասկանալ պատվիրված գրքերի հաճախակի մերժման պատճառները:
7. Թույլատրել բացել մագիստրոսական խմբեր նվազագույնը 5 ուսանողի առկայության դեպքում:
8. Գործնական խմբերում ուսանողների քանակը՝ 15-ից ոչ ավել, խստիվ պահպանել:
9. 15-20%-ով բարձրացնել աշխատավարձը:
10. Ուսուցումը մագիստրատուրայում դարձնել 1 կամ 1.5 տարի:

11. Նվազեցնել հանրակրթական առարկաների քանակը, ավելացնելով ռուսերենի և անգլերենի ուսուցման ժամերը:
12. Ռուսաց լեզու դասընթացը ոչ մասնագիտական ֆակուլտետներում ավարտել քննությամբ կամ տարբերակված ստուգարքով:
13. Տպագրված ուսումնական ձեռնարկները, դասագրքերը, ինչպես նաև գիտաժողովների ժողովածուներում տպագրված գեկուցում-հոդվածները ներառել վճարվող աշխատանքների մեջ:
14. Բացել համալսարանին կից դպրոց:
15. Վերացնել դասաստուգումներ անցկացնող տեսուչների հաստիքները՝ փոխանցելով այդ գործառույթը դեկանատներին:
16. Վերանայել դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրը:

2. ԼՍԵՑԻՆ՝ Մոսկվայի կառավարության կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ Դեկան Պ. Բալայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես Մոսկվայի կառավարության կրթաթոշակի թեկնածուներ՝ հաստատել հետևյալ անձանց.

Քոչարյան Անի Արմենի (3-րդ կուրս, Լեզվաբանություն և ՄՄՀ)

Պիվազյան Ադրինե Արայի (2-րդ կուրս, Ռուսաց լեզու և գրականություն):

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ